

ԳԱՐԵԳԻՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
GAREGIN PETROSYAN

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԸ ՔՐԵԱԿԱՆ
ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆՉՂԱՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Սիջազգային իրավական ակտերում և ՀՀ միջազգային պայմանագրերում մրցակցության հասկացությունը տրված է: Այն՝ որպես դատավարության (այդ թվում՝ քրեական դատավարության) ինքնուրույն սկզբունք չի առանձնացվում և քննարկվում է որպես իրավաբանական բոլոր ընթացակարգերի (սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական դատավարությունների) կառուցման ու կազմակերպման համընդհանուր սկզբունք-կառուցակարգ, դատավարության կարգի միասնացման նախասկիզբ, հիմունք, մարդու և քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության դատական կառուցակարգի բաղկացուցիչ մաս, սահմանադրական, քաղաքացիական, քրեական և վարչական գործերի հանգամանքների հետազոտման և վեճերի (կոնֆլիկտների) արդյունավետ լուծման փոխկապակցված մեթոդների (եղանակների) համակցություն-մոլոշօրինակ, մի խոսքով՝ արդար դատաքննության կարևորագույն երաշխիք¹, որը որոշարկուն է գործին մասնակցող անձանց և գործը լուծող դատարանի կարգավիճակը, նրանց միջև գործառույթների բաժանումը, նրանց իրավունքներն ու պարտականությունները²:

Այսօր իրավաբանական գրականության մեջ անվիճելի է այն փաստը, որ ընթացակարգային իրավունքի չորս ճյուղերում էլ մրցակցության բովանդակությունը, դրա բաղկացուցիչ տարրերը, դրա կառուցվածքը և ներքին կարգավոր-

¹ Տե՛ս 1984թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6, 7, 13-րդ և վերջինիս կից թիվ 4 և 7-րդ արձանագրությունների 1-ին և 2-4-րդ հոդվածները, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետը:

² Տե՛ս Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 21-րդ, ՀՀ դատական օրենսգրքի 17-րդ, ՀՀ քաղ. դատ. օր. 6-րդ, ՀՀ քր. դատ. օր. 17 և 23-րդ, ՀՀ ՎՊՕ 5-րդ և գործով ապացուցման պարտականությունը դատավիճող կողմերի վրա բաշխելուն վերաբերող նշված օրենքի և օրենսգրքերի բազմաթիվ այլ հոդվածները:

վածությունն ըստ էության մույնն են, իհարկե, որոշակի առանձնահատկություններով հանդերձ: Ըստ որում՝ մրցակցության սկզբունքի էության արտահայտման եղանակ հանդիսացող մրցակցության բովանդակության հիմնական տարրերն են՝ 1) դատավիճող կողմերի (քրեական դատավարությունում՝ մեղադրանքի և պաշտպանության) իրավունքներն ու պարտականությունները, որոնք որոշված են ընթացակարգային իրավունքի ճյուղերի նորմերով, 2) կողմերի իրավահավասարությունը, որը ևս շեշտված է համապատասխան օրենքների նորմերում, 3) ապացուցման պարտականությունը (մույնպես նշված է օրենքներում), 4) մրցակցային դատավարությունում դատարանի՝ որպես իշխանական լիազորություններով և պարտականություններով օժտված պետական իշխանության մարմնի դիրքորոշումը, ըստ որի՝ դատարանը մրցակցությանը չի մասնակցում, բայց նա իրավունք ունի անխոչընդոտ ձևով արդար լուծել գործը, ուստի դատավարությունում կարող է կողմերի խնդրանքով օժանդակել նրանց ապացույցներ ձեռք բերելու հարցում, 5) մրցակցության սկզբունքի իրացման սահմանները, ըստ որի՝ չի կարելի կողմերին ստիպել ներկայացնելու ապացույցներ, որոնք նրանք չունեն և որոնք կարող են ձեռք բերել միմիայն դատարանի օժանդակությամբ³:

Մրցակցության սկզբունքի վերը նշված տարրերը քրեական դատավարության նկատմամբ կոնկրետացնելու արդյունքում պարզ է դառնում, որ ամբողջ քրեական դատավարությունն այսօր ընթանում է կողմերի մրցակցության հիման վրա, և որ քրեական դատավարությունում այդ սկզբունքի բովանդակությունն առաջին հերթին և գլխավորապես կայանում է հենց մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման գործառույթները տարաջատելու մեջ (Քր. դատ. օր. 23-րդ հոդվ.):

Քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքը 1860-ականներից մինչ օրս շարունակում է մնալ ոչ միայն իրավունքի ընդհանուր տեսության ներկայացուցիչների և դատավարագետների ուշադրության կենտրոնում, այլ նաև հանդիսանում է իրավաստեղծ, իրավակիրառ և իրավամեկնաբանում իրականացնող սուբյեկտների լայն քննարկման առարկա: Դա, անշուշտ, կապված է իրավունքի այդ ճյուղի ավելի բարձր հանրային նշանակության հետ: Այն առավել չափով է շոշափում ԶԳ քաղաքացիների՝ միջազգային և սահմանադրական իրավունքներով երաշխավորված հիմնական իրավունքները և

³ Ст'я Кирохтин Ю.А. Конституционно-правовое регулирование и реализация принципа состязательности судопроизводства в Российской Федерации. Автореф. дисс. ... канд. юрид. наук, М., 2007, էջ 17:

ազատությունները: Այսօր, ինչպես որ 1860-ականների դատական բարեփոխումների ժամանակ, ռուս և հայ իրավագետները դարձյալ վիճում են այն հարցերի շուրջ, թե մրցակցությունն արդյոք գործու՞մ է քրեական դատավարությունում, թե՞ խորթ է նրան, եթե այո, ապա դատարանի մեղադրական դերի ժխտման ներկա պայմաններում որո՞նք են այդ սկզբունքի նույնությունը, հասկացությունն ու բովանդակությունը, մրցակցային դատավարության շրջանակներում քննչական սկզբունքն ի՞նչ սահմաններում կարող է գործել, տարածվու՞մ է այն, արդյոք, նախնական քննության փուլերի վրա, ժամանակակից մրցակցային դատավարությունն ապահովու՞մ է արդարադատության արդարացիությունը, ի՞նչ փոխհարաբերության մեջ է գտնվում մրցակցությունը քրեական դատավարության մյուս սկզբունքների հետ, որո՞նք են այդ սկզբունքի իրացման առանձնահատկությունները քրեական դատավարությունում ընդհանրապես և առանձին դատավարական գործողությունների կատարման ժամանակ՝ մասնավորապես, դատարանի ակտիվ դերը պե՞տք է, արդյոք, հակադրել արդարադատության իրականացման մրցակցության սկզբունքին կամ ինչպե՞ս ապահովել կողմերի լիարժեք մրցակցությունը և նրանց իրավահավասարությունը դատավարությունում, անհրաժե՞շտ է, արդյոք, քրեական կոնկրետ գործով վարույթում անպայմանորեն ապահովել նյութաիրավական (օբյեկտիվ) ճշմարտության բացահայտումը, թե՞ կարելի է բավարարվել սոսկ դատական (ձևական) ճշմարտության բացահայտմամբ և դատավճիռ կայացնել՝ բավարար հստակությամբ չհիմնավորելով այն փաստարկները, որոնք ընկած են այդ որոշումների հիմքում:

Գտնում ենք, որ մեկ հողվածի սահմաններում հնարավոր չէ համապարփակ վերլուծել քրեական դատավարության բնագավառում հիշյալ բոլոր հարցերին վերաբերող գիտական տեսությունները, հայեցակետերը, թեկուզև՝ դատավարական օրենսդրությունն ու դրա կիրառման պրակտիկան, նաև՝ նույն հարցերի վերաբերյալ արտահայտված ԶԶ սահմանադրական դատարանի դիրքորոշումները: Ուստի փորձենք պատասխան գտնել այդ հարցերից մեկին, տարածվու՞մ է, արդյոք, այդ սկզբունքը քրեական գործերի քննության մինչդատական փուլերի վրա:

Իրավագիտության զարգացման արդի փուլում, անշուշտ, վերն արված հարցադրումն իր պատասխանը պետք է ստանա Հայաստանում քաղաքացիական հասարակության կառուցման, դատական բարեփոխումների իրականացման ժամանակակից նվաճումների՝ իրավական, ժողովրդավարական պետության անբաժանելի մաս կազմող անկախ դատարանի կողմից անհատի, մարդու և

քաղաքացու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ամրապնդելու տեսանկյունից, սակայն, ելնելով այդ սկզբունքի կիրառման պատմական փորձից: Մրցակցության սկզբունքի սահմանների հարցն այսօր ճշտելու և հասարակական-իրավական հարաբերությունների ժամանակակից զարգացման միտումները նոր (նորացված) օրենսդրության մեջ արտացոլելու նպատակով մեծ կարևորություն ունեն նաև ՀՀ կառավարության 2011թ. մարտի 10-ի թիվ 9 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգ»-ի⁴ դրույթները, որոնք մշակվել են ՀՀ դատաիրավական բարեփոխումների երրորդ (2009-2011թթ.) ծրագրին համապատասխան: Հայեցակարգն առանձին-առանձին և ընդարձակ դրույթներ է նախատեսել մինչդատական վարույթում, այդ թվում՝ պարզեցված նախաքննության, ապացույցների աղբյուրների զարգացման, նախնական դատական լուծման և բուն դատաքննության ընթացքում մրցակցության տարրերի ուժեղացման, մինչդատական վարույթի վրա դատական վերահսկողության, ապացուցման պրոցեսում կողմերի իրական իրավահավասարության ապահովման, գործը նոր հանգամանքներով վերանայելու հիմքերի ընդլայնման վերաբերյալ (Հայեցակարգի 2.32-2.42-րդ, 5.2-5.3-րդ, 6.2-6.25-րդ, 7.12-7.18-րդ, 8.1-8.9-րդ, 8.15-րդ, 8.17-րդ, 8.21-8.22-րդ, 8.25-8.31-րդ, 9.13-9.16-րդ կետեր):

Քր. դատ. օր. 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա: Եվ չնայած որ ՀՀ քր. դատ. օրենսգրքում ՈՂ քր. դատ. օր. 5-րդ հոդվածի 56-րդ կետի նման «Քրեական դատավարություն» հասկացությունը՝ որպես քրեական գործերի մինչդատական և դատական վարույթների միասնություն, չի տրված, մենք անվիճելի ենք համարում հանգամանքը, որ ՀՀ օրենսդիրը ևս «Քրեական դատավարություն» հասկացության մեջ մտցնում է և՛ մինչդատական, և՛ դատական վարույթները: Դա են ապացուցում դատավարության տարբեր փուլերը և ինստիտուտները կարգավորող, հատկապես՝ ապացույցներին և ապացուցմանը, ինչպես նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությամբ վերաբերող Քր. դատ. օր. նորմերի ուսումնասիրությունը, ողջ դատական պրակտիկան և ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները: Այնպես որ, Քր. դատ. գործող օրենսգրքի ընդունումից հետո տվյալ հարցի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ և օրենսդրության կիրառման

⁴ Sb'u moj.am/am/download/plp?view.369, այսուհետ՝ Հայեցակարգ:

պրակտիկայում եղած վեճերին, ինչպես իրավամբ նշում են դատավարագետները, վերջակետ դրվեց⁵:

Ներկայումս մինչդատական վարույթն իրականացնում են հետաքննության և նախաքննության մարմինները, իսկ նրանց գործողությունների օրինականության նկատմամբ հսկողություն է իրականացնում դատախազը, սահմանափակ դատավարական գործողությունների նկատմամբ վերահսկողություն՝ դատարանը: Ըստ որում՝ նախնական քննության նկատմամբ վերահսկողությունը դատարանն իրականացնում է երկու ուղղություններով. առաջին՝ քաղաքացիների սահմանադրական իրավունքները սահմանափակող քննչական գործողությունների կատարման թույլտվության վերաբերյալ որոշումներ կայացնելու միջոցով (ՀՀ քր. դատ. օր. 41-րդ հոդվ. 2-րդ մասի 1-ին կետ, 282-286-րդ հոդվածներ), երկրորդ՝ կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց կողմից իրենց իրավունքները և օրինական շահերը խախտող հետքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների դեմ բողոքներն ընդունելու և լուծելու միջոցով (ՀՀ քր. դատ. օր. 290-րդ հոդվ.): Նշված երկու դեպքերում էլ դատարանի համար դժվար չէ ապահովել մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքի կիրառումը՝ ղեկավարվելով Քր. դատ. օր. 23-րդ հոդվածով, ապացույցների ձեռքբերման, հետազոտման և գնահատման ու քրեական դատավարության օրենսգրքով սահմանված մյուս կանոններով: Սակայն դատարանը քրեական գործերի նախնական քննության փուլում այսօր էլ չի օժտվել մրցակցության սկզբունքի ապահովման լիարժեք իրավունքներով:

Նախնական քննության փուլում ասպացուցման հարցում մեղադրանքի կողմին հավասար իրավունքներով չի օժտվել նաև պաշտպանության կողմը: Վերջինս, ինչպես որ 1960-ականների խորհրդային քրեական դատավարությամբ էր նախատեսված, այդպես էլ լիիշխան քննիչի առջև սոսկ միջնորդի դերում մնաց: Չէ՞ որ այսօր էլ կենտրոնական դեմքը նախնական քննության մեկ՝ քրեական հետապնդման կողմն է, որ օժտված է իր հայեցողությամբ հարկադրանքի բոլոր միջոցները կիրառելու իրավունքով: Վերջինս է որոշում քննության ողջ ընթացքը, օժտված է իշխանական լիազորություններով և

⁵ St'u Подшибякин А.С. Принцип состязательности и его реализация при проведении уголовно-процессуальных действий по УПК Российской Федерации / А.С. Подшибякин // Уголовно-процессуальный кодекс Российской Федерации - Проблемы практической реализации: Материалы Всероссийской научно-практической конференции (Г. Сочи, 11-12 октября, 2002г.). Краснодар. Изд. Кубанского гос. ун-та, 2002. - էքր 36-52:

լուծում է խափանման միջոց ընտրելու, պաշտպանության կողմի միջնորդությունները մերժելու, բացարկների լուծման, միջնորդությունների ընդունման, քաղաքացիական հայցի ապահովման և այլ հարցերը, գործի ճակատագիրը (կարճելը, կասեցնելը, քննության ժամկետները երկարաձգելը, գործը դատարան ուղարկելը և այլն), որպիսի իրավունքներ պաշտպանը կամ մեղադրյալը չունեն։ Մեղադրանքի կողմն ունի ապացույցներ հավաքելու մեծ զինամոց, իսկ պաշտպանին մնում է միայն բացահայտել նրա սխալները կամ միջնորդել իր կողմից ձեռք բերված նյութերը (իրականում՝ տեղեկատվությունը) գործին կցելու մասին, որը կարող է նաև մերժվել քննիչի կողմից և այլն։ Կամ ո՞վ պետք է պարզի այն հարցը, թե պաշտպանը ջանացե՞լ է, արդյոք, պարզել մեղադրյալին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, կամ նա դրանք պարզելու բավարար միջոցներ ունի՞, թե ոչ։ Եթե ավելացնենք նաև, որ հետաքննիչը կամ քննիչը դատավարական առումով գտնվում են դատախազի հսկողության և քննչական վարչության կամ բաժնի պետի վարչական ենթակայության տակ, ապա ստացվում է, որ նրանք ևս դատավարական լիարժեք անկախությամբ օժտված չեն։ Այս ամբողջը վկայում է, որ մեղադրյալը մրցակցում է քննիչի հետ, և նա նախնական քննության փուլում լայն առումով դեռևս անօգնական և անպաշտպան է, որ այստեղ մրցակցությունը կրում է ձևական բնույթ։

Բացի նշվածներից՝ հենց Քրեական դատավարության օրենսգրքում մրցակցության սկզբունքին վերաբերող հակասական նորմեր են պարունակվում։ Այսպես՝ Քր. դատ. օր. 23-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է քրեական հետապնդման, պաշտպանության և գործի լուծման գործառույթների տարանջատումը։ Ուրեմն՝ դրանք չեն կարող դրվել միևնույն մարմնի կամ պաշտոնատար անձի վրա։ Այս կապակցությամբ Քր. դատ. օր. 124-րդ հոդվածի 2-րդ մասն իրավացիորեն սահմանում է, որ մեղադրյալի մեղքի և պատասխանատվությունը խստացնող հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները։ Մինչդեռ, նույն օրենսգրքի 107-րդ հոդվածի 5-րդ կետը ապացուցման ենթակա հանգամանք է համարում նաև քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները՝ առանց տարանջատելու, թե ով պետք է ապացուցի դրանք։ Բանի որ գործի քննությունը կատարում է հետաքննիչը կամ քննիչը, ապա ստացվում է, որ նրանք պարտավոր են ապացուցել նաև պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքերը։ Դետեկտիվ, անհրաժեշտություն կա օրենսգրքում հստակեցնել, թե ո՞վ է պարտավոր ապացուցել մեղմաց-

նող և ո՞վ՝ խստացնող հանգամանքները, որպեսզի քննիչը չհամատեղի իրարից լրիվ տարբեր, մրցակցության սկզբունքին հակասող այդ գործառույթները: Բնական է, որ մեղմացնող հանգամանքների ապացուցումը պետք է հստակ նորմով վերապահվի պաշտպանին:

Քրեական դատավարության նախնական քննության փուլում մեղադրանքի և պաշտպանության կողմերի իրական մրցակցություն ապահովելու համար դատավարագետներն առաջարկում են մի քանի եղանակներ: Այսպես՝ Ռուսաստանի ԳԱ Պետության և իրավունքի ինստիտուտի արդարադատության խնդիրների բաժանմունքի վարիչ պրոֆ. Ի.Լ. Պետրովսիին առաջարկում է քրեական հետապնդման մարմիններին օժտել միայն մեղադրանքի գործառույթով, իսկ դրան զուգահեռ մտցնել փաստաբանական նախնական քննություն՝ քրեական գործին պարտադիր կցելով ձեռք բերված ապացույցները, հնարավորություն տալ քննչական մարմինների ցանկացած որոշում կամ գործողություն (անգործություն) բողոքարկելու դատարան, ինչպես նաև կանոն սահմանել, որ այս կամ այն դատավարական գործողությունը կատարելու մասին պաշտպանության կողմի միջնորդությունը ենթակա է պարտադիր բավարարման՝ դրանով իսկ հավասարեցնել մեղադրանքի և պաշտպանության կողմերի դատավարական հնարավորությունները⁶:

Դատավարագետ Ս.Ա. Մուկասեևան, ով իրավացիորեն մրցակցության սկզբունքը քննարկում է սահմանադրական, քաղաքացիական, վարչական և քրեական դատավարություններում ընդհանրապես ու քրեական դատավարության նախնական քննության փուլում մասնավորապես, մրցակցության սկզբունքի հիմնական իրավաբանական երաշխիք համարում է նորմատիվ իրավական ակտերի կոնկրետ հոդվածներում դատավարական ձևերի կատարելագործումը և նշում է, որ «Դրանում հատուկ տեղ է զբաղեցնում իրավաբանական պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքը ... Կողմերի իրավական հնարավորությունների հավասարությունն անհնար է առանց որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու: Սակայն ներկայումս քաղաքացիների մեծամասնության համար դա անմատչելի է»⁷: Մեր կարծիքով, պաշտպանության կողմին սոսկ իրավաբանական օգնություն ցույց տալու մասին այս առաջարկը բավարար չէ կողմերի իրավահավասարություն ապահովելու համար թեկուզև այդ առաջարկի վերջին նախադասության մեջ նշված

⁶ Sb'u Петрухин И.Л. От инквизиции к состязательности / Гос. и право, 2003, N 7, էջեր 28-36:

⁷ Sbu С.А. Мукасева, Принцип состязательности в юридической практике. Автореф. дисс. ... канд. юрид. наук – Ярославль, 2006, էջ 25:

իրավաբանական օգնության անմատչելիության պատճառով: Օրենսդրության և դատավարական ձևերի կատարելագործումը, մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալը, անշուշտ, դրական դեր կարող են խաղալ մրցակցության ապահովման հարցում, սակայն դրա համար պետք է ունենալ նաև ավարտուն ժողովրդավարական և իրավական պետություն, որտեղ մրցակցության սկզբունքի իրականացման համար առկա կլինեն հասարակության կենսագործունեության քաղաքական, տնտեսական, սոցիալական, կազմակերպական և այլ նախադրյալներ: Նախնական քննության փուլում կողմերի իրավական վիճակը հավասարեցնելու համար անհրաժեշտ է նրանց կարգավիճակի կտրուկ փոփոխություն իրականացնել:

Անդրադառնալով պաշտպանին նախնական քննության ընթացքում հետաքննիչին կամ քննիչին «զուգահեռ քննություն» կատարելու, իր կողմից կազմված պաշտպանական եզրակացության մեջ մեղադրյալին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները շարադրելու և, դատախազի մեղադրական եզրակացության նման ու նույն կարգով դատարան ներկայացնելու իրավունք վերապահելու հարցին, դատավարագետ Ռ. Բաղդասարովը փաստում է, որ նախնական քննության փուլում այն մրցակցության նշանակալից բաղադրատարր է, որը համաշխարհային պրակտիկայում դիտարկվում է որպես «ուժերի հաշվեկշիռ ապահովելու»⁸, այսինքն՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի ուժերը հավասարակշռելու համար: Վերլուծելով պաշտպանության կողմի նկատմամբ քննիչի խտրական լիազորությունները (փորձաքննություն նշանակելու, փորձարարություն անցկացնելու և այլն), ինչպես նաև պաշտպանի կողմից ձեռք բերված նյութերը ներկայացնելու, քրեական գործին կցելու և հետազոտելու իրավունքը (Քր. դատ. օր. 73-րդ հոդվ. 1-ին մասի 5-րդ կետ), Ռ. Բաղդասարովը միաժամանակ մատնանշում է Քր. դատ. օր. 122-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ այդ փաստաթղթերն ապացույց են ճանաչվում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, այլ կերպ՝ դրանք գործին կցվել, ըստ օրենքի, պարտադիր չէ: Ելնելով այն հանգամանքից, որ գործող կարգի համաձայն՝ քրեական հետապնդման կողմն է հավաքում, ստուգում, գնահատում ապացույցները և այդ հիման վրա ընդունում որոշումներ առանց հաշվի առնելու պաշտպանության կողմի կարծիքը և գտնելով, որ դա հակասում է անհատի իրավունքների պաշտպանության վերաբերյալ սահմանադրական նորմերին՝ Ռ.

⁸ St'iu Bagdasarov P.B. Принцип состязательности в уголовном процессе России и стран Европейского Союза. М., Юрлитинформ, 2008, էջեր 110-111:

Բաղդասարովն առաջարկում է. «Հավանաբար, այդ կապացությանը առավել արդյունավետ է խոսել դատական քննիչների ինստիտուտի ներդրման կարևորության մասին»⁹: Բնական է, որ դատական քննիչների ինստիտուտի ներդրմամբ մեղադրանքի կողմը կզրկվի ապացույցներ հավաքելու իրավունքից, նրա իրավունքները կհանձնվեն կողմերից անկախ մարմնին՝ դատական քննիչին, որը և կիրականացնի նախնական քննությունը, կողմերն այդ դեպքում կարող են միայն միջնորդել նրան անհրաժեշտ գործություններ կատարելու մասին, իսկ մեղադրյալին արդարացնող կամ նրա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների պարզումը կդրվի պաշտպանի վրա:

Ղատավարագետներ Յու. Կուրոխտինը և Ա. Բարաբաշը ևս գտնում են, որ չնայած նախնական քննության վարույթում հռչակված է մրցակցության սկզբունքը, սակայն քրեական դատավարությունը դրանից իրական մրցակցային չի դարձել օրենքի անկատարության պատճառով, և, ելնելով պրակտիկայի պահանջներից, անհրաժեշտ է այդ վարույթը լրամշակել առանձին մանրամասներում՝ մոռացության չտալով նաև բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության սկզբունքը, որի մասին հիշատակումներ կան գործող Զր. դատ. օրենսգրքում (ՌԴ քր. դատ. օր. 154-րդ հոդվ. 2-րդ մաս, 206-րդ հոդվ., որոնց համապատասխանում է ՀՀ քր. դատ. օր. 23-րդ հոդվ. 4-րդ մասը)¹⁰:

Հայ դատավարագետներ Գ. Ղազինյանը և Ա. Հարությունյանն այն կարծիքին են, որ «Նախնական քննության փուլում «կողմեր» հասկացության կիրառումը մրցակցության սկզբունքի լիարժեք իրականացում չի ենթադրում, որովհետև այդ փուլում կողմերն իրավահավասար չեն»: Ըստ նրանց՝ նախնական քննության փուլում մրցակցության սկզբունքը կիրառվում է մասնակիորեն, և այս փուլում առկա են ընդամենը մրցակցության առանձին տարրեր: Հենվելով Ա. Բոյկովի կարծիքի վրա՝ նշված հեղինակները նաև ժխտում են «փաստաբանական քննության» անցկացման գաղափարը՝ գտնելով, որ այն չի կարող նպաստել քրեական դատավարության խնդիրների արդյունավետ իրականացմանը¹¹:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 113:

¹⁰ Տե՛ս Кухотин Ю.А., նշվ. սեղմագիրը, էջ 25, Барабаш А.С. Состязательность – её прошлое и настоящее в теории российского уголовного процесса и в законодательстве // Сибирские юридические записки. Ежегодник ассоциации юридических вузов. "Сибирь". Выпуск 3. Краснояр. гос. ун-та. Красноярск, 2003, էջ 17:

¹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս: Չեղ. խմբի ղեկ. և խմբագիր պրոֆ. Գ.Ս. Ղազինյան: Եր. համալս. հրատ.: Երևան-2006, էջեր 184-185:

Կարծում ենք, որ քրեական դատավարության մախնական քննության փուլում կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքի լիարժեք ներդրման անհնարինության կամ աննպատակահարմարության վերաբերյալ դատողությունները մնացել են անցյալում, հանրապետության իրավաբանների մի պատկառելի խումբ արդեն ձեռնամուխ է եղել 33 քր. դատ. օր. հիմնովին վերակառուցմանը: Նոր օրենսգրքի առաջացում դրվելու է մրցակցության սկզբունք-կառուցակարգը, սկզբունք-մեթոդն արդարադատության ոլորտում հենք-համակարգաստեղծ գործոն դարձնելու միտումը: Մասնավորապես՝ նշվում է, որ Հայեցակարգը նպատակ ունի քրեական դատավարության ոլորտում բարձրացնել դատական իշխանության և դատարանի դերն ու նշանակությունը, ստեղծել արդարադատության արդյունավետությունն ապահովող և արդար դատաքննության տարրերի, այդ թվում՝ մրցակցության, իրականացումը երաշխավորող գործուն համակարգեր, դատավարական իրավահարաբերությունների և գործողությունների հիմքում դնել գործառույթային տարանջատման սկզբունքը, դատավարության սուբյեկտների համար սահմանել բացառապես նրանց դերից, նշանակությունից և կարգավիճակից բխող գործառույթներ ու լիազորություններ, իրավունքի հանրաճանաչ սկզբունքների հիման վրա երաշխավորել քրեադատավարական ոլորտ ներգրավված անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և այլն, որոնք միասնաբար ապահովելու են քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքի և ընդհանրապես մրցակցության գաղափարախոսությունը վերափմաստավորելու, այն դատավարական սկզբունքից դատավարության ձևի (ռեժիմի) վերածելու, քրեական դատավարությունում կիսամրցակցային (իսկ առանձին դրվագներում՝ նաև ինկվիզիցիոն) դատավարությունից դեպի լրիվ մրցակցային անցման իրականացումը (Հայեցակարգի 1.16-րդ կետ): Հայեցակարգը ենթադրում է նաև մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքի առավել բարձր երաշխավորվածության ապահովում, ապացույցների թույլատրելիության և հավաստիության երաշխիքների ընդարձակում, պաշտպանության կողմին մինչդատական վարույթում և դատաքննության ժամանակ ապացույցներ ներկայացնելու իրավունքի վերապահում, մրցակցության և կողմերի հավասարության պայմաններում մինչդատական վարույթի արդյունքների ամփոփմանը նվիրված նոր դատական փուլի հիմնադրում, ապացույցման գործընթացում դատարանին պասսիվ արբիտրի դերի վերագրում և այլն (Հայեցակարգի 1.14-1.18-րդ կետեր):

Այն հարցը, թե ինչպիսին կլինի ՀՀ քր. դատ. օր. մոտեցումը նախնական քննության փուլում մրցակցության և կողմերի իրավահավասարության ապահովման վերաբերյալ, թե վերը նշված որ առաջարկները կիրացվեն լրիվ կամ մասնակիորեն, կորսևորվի դրա նշակման, քննարկման և ընդունման ընթացքում: Սակայն հիմնական մոտեցումն արդեն պարզ է. օրենսդրության ընդհանուր կատարելագործումից բացի՝ առաջին հերթին և գլխավորապես պետք է լուծվի նախնական քննության փուլում մրցակցության լրիվ գործողություն ապահովելու հարցը՝ ամրապնդելով անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքներ, մասնավորապես՝ պաշտպանության կողմի իրավունքների ընդլայնում, դատական վերահսկողության ինստիտուտի ուժեղացում և հստակեցում (Հայեցակարգի 1.17-րդ կետի «ա» ենթակետ):

Հասկանալի է, գիտական մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ թվարկել Քր. դատ. նոր օրենսգրքում կատարվելիք ձևակերպումներն ու մի քանի տասնյակ հոդվածների կատարելագործման առաջարկները, ուստի կանգ առնենք դրանցից միայն մի քանիսի վրա: Առաջին հերթին անհրաժեշտ է՝

ա. ճշգրտումներ մտցնել օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում և լրացում՝ 125-րդ հոդվածում փաստաբանի կողմից ձեռք բերված նյութերը հետաքննիչին, քննիչին, դատախազին և դատարանին ներկայացնելու դեպքում դրանք քրեական գործին կցելու պարտադիրության մասին,

բ. օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ մասում կատարել փոփոխություն, որի համաձայն՝ ինչպես պաշտպանության, այնպես էլ մեղադրանքի կողմերի հավաքած ապացույցների անթույլատրելիության հարցի լուծումը վերապահել դատարանի բացառիկ իրավասությանը, իսկ հետաքննիչին, քննիչին, դատախազին վերապահել միայն մեղադրող ապացույցների անթույլատրելիությունը որոշելը,

գ. Քր. դատ. օրենսգրքի մեջ նախատեսել նոր գլուխ և դրանում լուծել պաշտպանի կողմից քրեական գործին կցելու և հետազոտելու համար նյութեր (առարկաներ, փաստաթղթեր, տեղեկություններ, հարցումների պատասխաններ և այլն) ձեռք բերելու և ձևակերպելու (ֆիքսելու) ձևերը և բովանդակությունը,

դ. պաշտպանին իրավունք վերապահել հրավիրելու վկաներ կամ նշանակելու փորձաքննություն, սահմանելու քրեական գործերով պարտադիր փորձաքննության սպառիչ դեպքերը, պահանջելու լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության նշանակում և այլն, և այլն: Մի խոսքով՝ քանի որ կողմերի մրցակցության և իրավահավասարության հարցում քրեական դատավարության հետագա զարգացումն օրենսդիրը նոր Հայեցակարգում կապում է օրենսդրու-

թյան կատարելագործման և «փաստաբանական քննության» (և ոչ թե դատական քննիչների ներդրման) հետ, ապա օրենսդիրը պարտավոր է հանրային-մրցակցային քրեական դատավարության բոլոր փուլերում, բոլոր ինստիտուտներում ամրագրել պաշտպանական կողմի հավասարությունը մեղադրական կողմի հետ և գործնականում ապահովել դրա իրացումը:

Հիշյալ բարեփոխումների հիման վրա կատարվելիք օրենսդրական փոփոխություններն ու լրացումները Հայաստանում մրցակցությունը կհանգեցնեն միջազգային չափանիշներով դրա ընկալմանն ու գործառնմանը:

Օրենսդրական բարեփոխումներից հետո մրցակցությունը, ընթացակարգային իրավունքի ճյուղերի մյուս սկզբունքների հետ համատեղ, կորոշի իրավաբանական գործընթացի կազմակերպման կարգը և արտասահմանյան դատավարական դոկտրինի նման մեզանում ևս կդիտարկվի (կքննարկվի) ոչ թե որպես դատավարության սկզբունք, այլ որպես դատավարության կազմակերպման հիմք, վեճի արդյունավետ լուծումն ապահովող փոխկապակցված մեթոդների համակցություն:

The principal of adversarial approach in the pre-trial stage of Criminal Justice

In this work there is a reference to the exercise of adversarial approach in one of the procedural branches of law - criminal procedure. Taking into consideration, that numerous subquestions concern the issue under discussion in legal literature and judicial practice, the author discusses only whether the principle is applied to the stages of preliminary investigation. Substantiating the necessity of full application of that principle in pre-trial stages, suggestions that correspond to contemporary legal thinking and based on the concept of the new RA Criminal Code are made concerning the improvement of legal norms regulating the principle.